

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկան վեցամսայ	7
Արսասահմանի համար	15 ֆր.
սարեկան վեցամսայ	8
Ասեհիկայի համար	3 ֆր.
սարեկան վեցամսայ	1.50

Ծանուցման տողը և ուղղիկ երեսին համար 40 սանթիմիտի վերջին երեսին համար 20 սանթիմիտ է: Երեկէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղը կրկայ:

Վառակայի համար ձեռք 10 սանթիմիտ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ. ԲԱՂՍԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇՍԲՅՈՒ ՕՐԵՐԸ
 ОТГОВОРИТЕ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

համակ և զրամ
 զրկն խմբագրութեան
 հասցեիք

Редакция на вѣстникъ
 "Шаржумъ"
 Варна

Redaction du journal
 "Charjoum"
 Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
 ձեռք 12

15 ՍԱՆԹԻՄ
 Արսասահմանի համար
 ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և չնի
 տուիք

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԻԿ ՎՃԱՐԷ

4 Ո 2

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ
 ԲՈՂՈՐ ՀԱՅԵՐՈՒՆ

Հայեր, հայեր, վերսկան հասիլ արեան ուղիները Հայաստանի կողմէն, և մեր գաղանթը շնամիները ամեն ջանք ու հր նար ի գործ գրած խղճի կը փափագին մեր ձայնն ու գոյութիւնը արեան այս ճակատագրին մէջ:

Հայեր, մեզ բնաջնջել կը խորհին մեր թշնամիները թէ ճակատանի և թէ կողմի սի մէջ. և մեր յուսահատ հայրերն ու մայրերն, եղբայրներն ու քոյրերն իրենց դառնալից նայուածքներն յառած մեզ՝ արտասահմանի հայերու վրայ, մեզնէ օգնութիւն և փրկութիւն կը սպասեն. վա՛յ մեզ, անտարբեր հայերու:

Ա՛րք եղբայրներ, եթէ ճշմարիտ է որ մենք կը սիրենք մեր ազգութիւնը և անոր փրկութիւնը, եթէ իրաւ է թէ մենք 25—30 տարուան դառն ու դժբախտ փորձերէն խրատուած պատրաստ ենք իրարու օգնել, հայրենիքի վերականգնումի արդար գործին օժանդակել, եթէ իրաւ է որ մենք գիտենք փրկութեան և ազատութեան արժէքը, և եթէ իրաւ է, թէ՛ մենք զգուած գանձ ենք անձնական սնտոսի վեճերէ, կուսակցական յետին մրտաճակներէ և այսօր բովանդակ հայութեան շահը չենք ուզեր զոհել մեր անձնական կրքերուն ուրեմն թանկ ժամանակն է միահամուռ հեռատեսութենէ գործելու, ձեռք ձեռքի տուած ընել ինչ որ կարող ենք և ինչ որ բացարձակօրէն անհրաժեշտ է:

Համիտի վերջին հարուածներն են ու ուժգնօրէն կիջնեն մեր տարաբախտ եղբայրներու զլուխ ներուն վրայ, Հայութիւնը բնաջնջելու նպատակաւ, զի ամեն օր յա՛որդակի հեռագրալուրերը մեզ կը գուժեն կոտորած ու թալան Պաթում ու Բագու, Սեբաստիա, Կեսարիա, Շուշի և Նուխի կարին և Տրպիզոն և վերջ ալ Ես

մօտ է վայրկեանը լսելու թէ ընդհանուր յարգ կայ կողմասի և ճակատանի մէջ համայն հայութեան:

Ի՞նչ կրտէ՛ք արտասահմանեան հայ եղբայրներ, մենք լսենք ու տեսնենք այս ամէնը ո՛ւ ապակին անտարբեր մնա՞նք. ու մենք իբրեւ հայ գեռ իրաւունք պիտի ունենա՞նք ապրելու. ի՞նչ անուշով և ի՞նչ երեսով. և մի թէ օտարները իրաւունք չի՞ պիտի ունենան ըսելու «Հայք արժանի էին իրենց այս վիճակին» Ամօթ է մեզ և բիւր ամօթ եթէ անտարբեր մնանք այս մեծ ահաւոր ճգնաժամին հանդէպ. և նաեւ մեծ մեղք ու ոճիր մեր խղճի և գիտակցութեան առջեւ:

Հայեր, մեր բնաջնջումը վրձնած են մեր թշնամի բռնակալները և կը ջանան զայն պարբերաբար կատարել, բայց չի պիտի յաջողին եթէ մենք այս օրէն այս ժամէն սկսինք մեր զլուխ ճարը նայիլ: Անհասական և կուսակցական խնդիրները տեղի տալու են, գաղբելու են Հընչակեան, Դաշնակցական, Չէզոք ևն. խտիրները զի ազգային Մեծ խնդիրն է որ կը յուզուի, այս սինքն «իինելու և չի լինելու» խնդիրն է. ամենակենսական հարց մը բոլոր հայութեան համար. որու վրայ ամեն Հայ իւր կարգին մտածելու և գործելու մեծ պարտականութիւնն ունի:

Մեր այս եղբրական տեսարանին առջեւ, ապիկար և փառատեն, չիկ Օրմանեանը և կարգ մը եպիսկոպոսներ Սուլթանին ճնշման տակ գոհունակութեան և շնորհակալութեան ուղղութեամբ կ'ստորագրեն ու կը մտաուցանեն Մեծ Մարդասպան՝ կարմիր Սուլթանին, և գազանը գեռ այսչափով ալ չը բաւակնացած կը ստիպուի յիշեալ կղերականները որ խնդրագրով մը գիտեն մեր վեճ. Հայրապետին որ գրէ և յորդորէ Արտասահմանի յեղափոխականներուն որ հանգիստ նստին և Սուլթանի կ'մըրկն հակառակ

գործեր չը կատարեն, որպէսզի Սուլթանն ալ Հայերուն լաւ նայի (***): սեսէ՛ք, ի՞նչ սոսկալի դաւ ու գարան որ Երլազը կը լարէ մեզ հայերու համար. թէ ի՞նչու համար այս դաւը:

Ձի շուտով պիտի վերաբացուի Լ Ա Հ Ի Յ Ի գեապանախորհուրդը, ուր պիտի կարգադրուին քաղաքական առկախ խնդիրներ և թերեւս մերն ալ, եթէ մենք այժմէն մեր ձայնը յաջողիք հոն հասցնել. պարզելով թրքական զազանութիւններն և կողմասի դաւերն իրենց հայաջինք՝ Երանդներով: Աստի կայմիր Սուլթանը կանխահոգութեամբ հակ կը տեսնէ ի ձեռքն ունենալ Հայ ազգի պաշտօնական շնորհակալութեան գրերն. և եթէ մեր ձեռքն ազգային վեճը չի լինուի, Հայրապետը լսէ (**) այդ Սուլթանական թելադրանքին և յեղափոխականներուն ուղղէ ո՛ր և է գիր հանդարտութիւն ևն. պատուիրող, որ ատեն Մեծ Մարդասպանի ներկայացուցիչը այդ երկու դիւանագիտական զէնքերով զինեալ պիտի չէզոքացնէ ո՛ր և է հայանը պատմիջամտութիւն իւր համախոհներով:

Աւրեմն եթէ մենք վաղօրօք մեր ձայնն կարենանք այդ դեպքանաժողովին մէջ բարձրացնել, մեծ հաւանականութիւն կայ անկէ օգուտելու, որուն համար պարտինք մեր բոլոր ճիգերն ու կարելիներն ի գործ դնել: Ձի գէթ առ այժմ այս միակ միջոցն է մնացած մեր գատը քաղաքագիտութենէ պաշտպանելու:

Արգ, Ամբրիկա, Անգլիա Թրանսա, Եղիպտոս, Ռումանիա, Պուլկարիա ևն. ևն. տեղեր րնակող Հայ եղբայրներ փութացէ՛ք խաղաղ միջոցներ կազմել, դրամ հաւաքել և հայութիւնը պատշաճօրէն անձ մը կամ մի քանի անձեր ներկայացնող մարմին մը կազմել. որ խօսի ու ներկայանայ յանուն բովանդակ հայութեան, զի այնպէս կը յուսանք թէ այս միջոց միջոցը պիտի

վճուէ հայութեան բաղդը կամ ճակատագիրը:

ՄԻ ՔԱՆԻ ՀՍՅԵՐ
 17 Ապր. 1905
 Վ ա ո ն ա

ԳՂՈՒՆ ԻԹ.
 ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳՂԻԱ
 ԱՆԳՂԻՈՅ ՊԱՏԱԿԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ
 Շար. Ասիտի քիւն և վերջ)

3. Չարգերը թէև իրենց անհրաժեշտ հետեւանքը եղող գաղթուններու պատճառով հայերը կը հեռացնեն իրենց բնաշխարհէն, բայց այդ շարագուշակ գաղթումն ալ իրեն բարբերը ունի. Ատով նոր-նոր հայ կական կեդրոններ գոյացան, Ամբրիկա, Պուլկարիա, Եպիպտոս ևն. որոնք կարելի է ապագային Մայր Հայրենիքի զօրաւոր նեցուկներ ըլլան. ինչպէս եղան արտասահմանի յոյները Յունաստանի համար. Այս ցրուած հայեր ամէն տեղ կարեւոր գիրք բռնած են և վաճառակամութեան մէջ յառայ կերթան. ասիկա ալ ուրիշ կապ մըն է Եւրոպոյ հետ:

4. Չարգերէն վերջը դաստիարակութեան աւելի մեծ եռանդ մը առաջ եկաւ թէ երկիրը եւ թէ արտասահմանի մէջ: Եւրոպոյ մէջ հայ ուսանողաց թիւը աւելցաւ. ամեն երկրի համալսարաններ լեցուեցան հայ ուսանողներով, և Աւստրոպոլիս թիւն մըն ալ կազմուեցաւ: Ասոնք ուրախալի երեսոյթներ են և սուրթանին հակահայ քաղաքականութեանը արդիւնք:

5. Իսկ աւելի մեծ արդիւնք մըն է «ընդհանուր գրականութեան զարգացումը»: Թիւրքալեզու դուրս հրատարակուած թերթերը իրենց թիւով, նիւթոց ճոխութեամբ և զանազանութեամբ խիստ հետաքրքրական եւ քաջալերական երեսոյթ մը կը պարզեն: Ամէն կողմ հայ գրականութիւնը մեծ դեր մը կը կատարէ: Միայն Բարիզի մէջ այսօր գուցէ Պուլսոյ հայ թերթերուն չափ թերթ կը հրատարակուի և հարկաւ ատոնց ամէնքն ալ բաժանորդ և ընթերցող ունին: Այս թերթերուն ամէնքն ալ քիչ թէ շատ ազգային են, Մեռելութեան երկրէն (Թիւրքալեզուն) դուրս ազգային շունչ մը կընթանայ ամբողջ արտասահմանի հայ գրականութեան մէջ. Ընթերցանու ինչն ալ թեր-

ասում. թէ սպանողը ուրիշ երեք հա-
յեր (III) էին. որոնք մահել են. ըստ
երեւոյթին այդ կեղծ ու ցանցառ
գէպը արձագանք է գտնում Ազգա-
մում:

Ազգամբ Եւրոպի-Եւրասիական ճանա-
պարհի եւ միաժամանակ Գարաբաղի
օղի եւ մետաքսեայ արդիւնաբերու-
թեան կենդրոններից մէկն է: Այստեղ
հարեաւոր ձիաորների մի խումբ
թուրքեր յարձակում են քաղաքի
օմնիբուսների վրայ. կողպուում 100ի
չափ հայ եւ ուսու ճանապարհորդնե-
րի, անգթութեամբ ծեծում եւ մի քա-
նիսներին էլ գաշտնով վիրաւորում
ու բռնորին էլ երկու սենեակում մի
քանի օր շարունակ փակում:

Փանձակի փոխանահանգապետը
հասնելով այնտեղ, իրեն անգործ է հր-
րատարակում, պատժելու այդ խու-
ժանին եւ վերադարձնելու կողպա-
սուած իրերը: Սակայն ճանապարհ
հորդները մի կերպ կարողանում են
անփորձ Եւրոպի հասնել:

Այդ օրուանից մինչեւ այսօր Եւրոպի-
նայտեան ճանապարհը համարուած
է փակուած:

Ոչ ոք երաշխաւորութիւն չէ տա-
լիս խնուողու ապատ երթեւեկութեան
համար:

Քաղաքում սիրում է մտքերի սար-
սափելի յուզում:

Թուրքերից եւ հայերից շատերը
անդափուրում են իրենց կենդանու-
նեցը. Իրութիւնը վտանգաւոր կեր-
պարանք է բնդուում:

Բ.

Հասաւ օգոստոսի 18-ը. ճաշին ինձ
մօտ եկան մի քանի ընկերներու ա-
մեն մէկը մի նոր լուր էր բերու-
մէկը յայտնում էր, որ մի ժամ առաջ
ներքին դարպասի մօտ թուրքերը
վիրաւորել են մի կզարծեցի հայի եւ
մօտի գտնուած գուժարները տարել.
երկրորդը թէ վերին դարպասի մօտ
Չարազը զի դարպասի վիրաւորել են
մի դարազալիցի հայի եւ հայերից
շատերը գնացել են վերահասու լինել
դործին: Մտնում է մեզ մօտ երրորդը.
«Նա, ինչ է պատահել դու ինչ խա-
րար ես բերել»:

— «Թուրքերը սպանեցին Լուսիա
կիներն»:

Լուսիակիները մի հարուստ ուսու կա-
պալառու է. նախկին հաշտարար դա-
տաւոր. Հայերին յայտնի էր այն ծայ-
րայեղ ատելութիւնը, որ տառուած էին
գէպի նա թուրք բէկերը. քանի որ նա
առաջին համարձակ քրիստոնէան էր
(թէ եւ ուս) որ յանդգնել էր գնել
խանի աղջկայ տոււր եւ այնտեղ իր
բնակութիւնը հաստատել:

Մեր մտքերը քանի գնում ծանրա-
նում էին. ես ընկերներու հետ ցան-
կանում էի գնալ սպանութեան վայրը
եւ ծանօթանալ գործին. կէս ճանա-
պարհին, թուրքերի թաղի ծայրին
դիմաւորում է մեր ծանօթ խանութ-
պան Մահտեսին (յետոյ սպանուած)
եւ բացականում:

— «Ներքին եկէք դարձէ՛ք. այսօր
թուրքերի գէպերը շատ թթուած
են»:

Մենք թողնում ենք մեր մահաբեր
մտադրութիւնը եւ գնում ենք գէպի
հայկական մէջդանը:

Հայ խմբուած ամբողջ գտնուած
էր ծանր գէպերի ազդեցութեան
տակ. Միջոցառում ճնշում էր:

«Չարազուչակ օր է՛» մընջում է
ընկեր Մ-ն դառնանք տուն. 10 րո-
պէից յետոյ տանն էի. Լուսիա է միմ-
տանց յետեւից հրացանի երկու ձայն.
շուտով երրորդը, չորրորդը. կրկին
նոյն ձայներից. մի քանիսս արդէն
մեր տանիցը ոչ չեցում. Մեր ընտա-
նիքի մէջ իրարանցում է ընկնում.
Մեր ընտանիքիս են հաւաքուած եւ
մեր բակում ապրող միւս ընտանիք-
ները Այս դրութեան մէջ մտնում ենք
մօտ կէս ժամ. պաշարուածներու գրու-
թիւնը խիստ վտանգաւոր է. երեք
կողմից շրջապատուած ենք թուրք
տներով. Մեր գիմացը թուրքերի
զիրքն է:

Վերջապէս մի լիսկով դուրս եմ
նետում եւ անկիւնում կանգնած մի
հայի հարցնում. ինչ կայ վտանգա-
ւոր չէ՞ անցնել հայկական մասը:

«Ոչ. այժմ հայերն են րոնել իրանց
զիրքերը եւ արձակում են»:

Ես մի կերպ ճանապարհ բաց անե-
լով ցանկապատների վրայով տեղա-
փոխեցի մեր ընտանիքը քաղաքի ա-
ւելի ապահով կողմերը Չանապարհին
կանգնած էին զինաւորուած հայերը
իրենց զիրքերում. թուրքերը թագ

նուած էին իրենց զիրքերի յետե-
ւում, չէին երեւում իմ հարցին՝ ինչ
է պատահել. ինչ եղաւ երկու տեղ
նոյն պատահանը «Աստուած քանդի
Քոստով բեգի (թուրք) տունը. փոքր
մէջդանից ատրճանակ արձակելով հա-
յերի վրայ. գնաց թուրքական թա-
ղը»:

(Շարունակելի)

ՊԵՐՍՈՒՆՆԵՐ ԱՆՎՈՐՈՒԹԻՒՆԻՆԵՐ
(Լը Գուրիէ Էօրօպէէն)

(Շար. Ասի. թիւ 16)

Եւրոպայի իրերի գիւղերն են թա-
թարներու գործ դրած վայրագու-
թեանց սարսափելի մանրամասնու-
թիւններով. թղթակիցներէն ոմանք
նոյն իսկ խօստովանած են թէ ինք
զինքնին անկարող կրգգային կատա-
ղութեան, խախտութեան աներեւա
կայելի վատութեան օրոշ մանրա
մասնութիւններ գրել:

Այդ անանտութեան ուժի պիղծ
չարաչար գործածումը 1 այն տեղե-
րու մէջ ուր մուսուլմանները ջախ-
ջախի մեծամասնութիւն կր կազմեն
թէ թուով եւ թէ զէպով սակաւա-
թիւ եւ գէշ զինուած հայերու, այս
ինքն կիներու եւ մանուկներու զէմ,
որ մուսուլմաններ երբէք չեն խա-
յեր: Այս մահացում է կատարուած
միայն սպանելու դարձութեանէն
կատարելագործուած տանջանքի
բռնաբարուած յափշտակում, հրդեհ,
ինչպէս Չինկիզիաներու եւ թամու-
լաններու գեղեցիկ օրերուն միայն
այն տարբերութեամբ որ Չինկիզիա-
նեք եւ թամուլաններ իրենց նախ
ճիրները կը գործէին այնպիսի երկ-
րի մէջ եւ այնպիսի ժամանակ մը
երբ զեռ «բազաբակրթութիւն խօս-
քը հնարուած չէր եւ ուժին շարա-
չար գործածուած ընդհանուր օրէնք
էր. մինչդեռ ներկայ ոճիրները տեղի
կուենան այսօր. 20րդ դարուն մէջ.
վայրկեանի մը մէջ. երբ անհուրեք
օրհնեցները կը բարձրանան «քա-
ղաքակրթութեան յաղթանակին» հա-
մար, ու արթուն եւ մեղսակից իչ
խանութիւններու աչքերուն առջեւ,
երկրի մը որ զեռ կը համարձակի

եւ այդպէս չեմ խորհիր. Աւ, իմ աչ-
քիս, երեսը բիրտ է ու սխալալ Բայց
անօգուտ է աւելին ըսել. կատեմ
զայն. Չեմ ուզեր այլեւս անոր մասին
խօսիլ. Սիւլէյմանս:

— Աւ ան կը սիրի Դէֆիս
— Մի՛ կըր. Սիւլէյմանս — չեմ գի-
տեր, ու կատեմ զայն Անգթութիւն
է այդ մարդուն մասին խօսիլ. Դէ-
ֆիսին:

— Մէկ չնչին հարցում մ'ալ. Դէ-
ֆիս. Սիւլէյմանդ այս իրիկուն քեզ
հօրդ պիտի թողու եւ կուզէ որ ա-
մէն ինչ գիտնայ էնոր մասին, որ
պէսզի, երբ զժապողութիւն մը հաս-
նի էնոր պատրաստ ըլլայ օգնու-
թեան հասնել: Հիմա բաէ ինձ, հոգ
եա՛կս, Արամաբան կո. զէ՞ որ դուն
անոր հետ ամուսնանաս կրսեւ թէ
հայրդ իրեւ աղայ մը կը նայի անոր
վրայ:

Եթէ այդպէս է ուրեմն այդպիսի
կարգադրութիւն մը շատ բնական է:
Ապշած մնացի. այդպիսի գաղափար
մը երբէ՛ք չէր հետաքրքրած զիս,
բայց շատ հաւանական է որ Գրոզոյի
խորհրդածութեան մէջ մտած կը այդ

պարծիլ ըլլալ Ասիոյ մէջ արեւմտ-
եան քաղաքակրթութեան ախոյ-
եանը՝ եւ Արեւելքի քրիստոնէա-
ներու պաշտպանը:

Ռուս կառավարութիւնը այս ան-
գամ եւս պիտի պատժուի իր «եւեմ»
սխալին համար զոր գործելու ճամ-
բուն մէջ է:

Նախ, ինչ պիտի ըլլայ երկրի մը
վարկը, ուր նոյն իսկ ամենախաղա-
ղաւէր, աշխատասէր եւ օգտակար
հպատակներու համար անկարելի է
խաղաղութեամբ եւ ապահովութեամբ
շահագործել հողին բնական հարս-
տութիւնները. այս տեսակ գործերը
չեն որ Ռիթէի պիտի թոյլ տան իր
ջանքերը լաւ գործ գնել Ռուսիոյ
վարկը բարձրացնել եւ ապագայ փո-
խաւորութիւնը յաջողցնել:

Բայց աւելին կայ. թաթարները
միայն հայերու եւ անոնց հարստու-
թեանց վրայ չեն յարձակիր. ա-
յոնց կործանելի կատաղութիւնը կուզ
զուրի երկրին բոլոր քրիստոնէանե-
րուն զէմ: Ռուսներու, չէտացի-
ներու, անգլիացիներու եւ ֆրան-
սացիներու պատկանող արդիւնազոր-
ծարաններն ալ հրդեհուած են նոյն
եռանդով ինչ եռանդ որ գործադր-
ուած են հայերուն կալուածներուն զէմ.
Եւ քանի որ ինքզինքնին անպատիժ
կը տեսնան պիտի մտածեն որ թուր-
ցած Ռուսիան իրենցմէ կը վախնայ
ու իրենց զէնքերը պիտի դարձնեն
կատաղութեան զէմ. իրենց օղ-
նութեան կը կանչեն Պարսկաստանի
եւ թուրքիոյ հաւատակիցները (ար-
դէն հեռագիրները պարսկա-թրքա-
կան սահմանէն անցնելը հաղորդեցին
4000 քիւրաբերու եւ պարսիկ խուժանի
թաթարներուն օգնելու համար)

ու պիտի բարձրացնեն դրօշակը
անոր որ կը կոչուի սուրբ պատե-
րազմը Ռուսիոյ զէմ, կովկասը մու-
սուլման լուծի տակ զնելու համար:
Ռուսիան պարտաւորուած պիտի ըլ-
լայ մի անգամ եւս կովկասը տիրա-
պետել. ու եթէ այս կառավարու-
թիւնը զեռ երկարացնէ իր այս թոյլ
եւ երկդմի զիրքը կարելի է որ Ռու-
սիան յաղթուի Սուլթան Համիտին
հրամանին տակ միացած, ու թերեւս
եւ Վիլհէլմ երկրորդէն քաշա-
լերուած մուսուլման աշխար-

ին վրաս, վառի սկսան Դաստակէս
բռնելով:

— Դէֆի, գոչեց խոպոտ ձայնով մը,
ըսէ ինձ. Պետք է գիտնալ Գրոզոյի
մասին—դադարեղ մը կայ քու եւ ա-
նոր միջեւ. Բաէ, ո՛հ, բաէ ինձ. Դէ-
ֆիս կը սիրէ՞ ա՛յ մարդը Ո՛հ, բաէ
ինձ.—ու հիմա ձայնը կաթողին ա-
ղբարանքով մը եւ աչքերը գործով
ղեցուած էին—Անթէ Դէֆիս կը սիրէ
ուրիշ մը... ո՛հ, թղթէ թէ վտանգի
կապոյտ ջրերուն ներքեւ քնացած
ըլլայի... իցի՛ւ...:

Սակայն այլեւս չէի կրնար համ-
բերել ու իր վզին պլլուելով—Սիւ-
լէյմանս, հեկեկազի, դուն քու Դէֆիդ
չես հասկցած. Դեզմէ գատ ուրիշ մէկը
սիրած չեմ ես. Եթէ դուն վտանգի
կապոյտ ջրերուն տակ քնանաս,
Դէֆիդ ա՛յ հոն պիտի հանգչի. Իսկ
գալով այդ անոնի Գրոզոյին. կա-
տեմ զայն, կը խորշիմ անկէ, չեմ
գիտեր թէ ինչո՛ւ. միշտ կը քննի
վրաս. բայց ան որքան ազնիւ գրա-
նուելու ուզած է ինձի հանդէպ եւ ա՛յն-
քան աւելի ատած եմ զայն: Ո՛հ կը
վախնամ անկէ, կարծեմ թէ պիտի

սպաննէ զիս:

— Սպաննէ՛ քեզ, ինչո՛ւ պիտի
սպաննէ Դէֆիս. գոչեց Սիւլէյման:

— Որովհետեւ... որովհետեւ...
ա՛հ Դէֆիդ յիմար մի՛ կարծեր... կը
վախնամ թէ կը սիրէ զիս, եւ ո՛հ,
գիտէ թէ ես կատեմ զինքը:

— Սիրակա՛նս. ըսաւ Սիւլէյման,
Գրոզոն երբէ՛ք չը պիտի սպաննէ
Դէֆիս. քանի իր Սիւլէյմանը ողջ է:

Ու հիմա կրկին իր բազուկներուն
մէջ սեղմուած էի եւ մեր սիրահարի
կոխը վերջացած էր. ինչպէս որ սո-
վորաբար կըլլայ. ապա. փոխադարձ
վտանգութիւնը նորոգելով՝ պատմեցի
իրեն թէ Գրոզոն ինչպէս մեր բնտա-
նիքի անդամներէն մէկը եղած էր.
Թէ ինչպէս հայրս գտնելով զայն
երբ զեռ վեց տարեկան մանուկ մը.
լեռներուն մէջ. Քիւրտ կնկան մը քով
լայազին. տուն բերած ու օրդեգրե-
լով՝ իր զաւկին նման պահած էր:

— Եւ ինչպիսի մէկն է հարցուց
Սիւլէյմանս:

— Շատ բարձրահասակ է—քեզմէ
ալ բարձր—ըսի, եւ խիստ ուժով տե-
ղադիր կրսեւ թէ գեղեցիկ է. սակայն

«Ո՛հ, պատասխանեցի, վստահ եմ որ,
հօրս գաղանի վշտերը ժամանակ չեն
թողած իրեն այդ տեսակ ծրագիրներ
կազմելու. կամ այսպիսի ծանր խնդ-
րոյ մը առթիւ կարգադրութիւններ
ստանալու: Ո՛հ, ատանկ բան մը չկայ:

— Աւրեմն Սիւլէյմանդ գոհ կը հանգ-
չի. Այսու ամենայնիւ, խոր հառաչ մը
հանեց եւ կը տեսնուէր թէ վախին
ժանրութեան տակ կընկճուէր—«Դէֆիդ
Աստուած ներէ ինձ, ըսաւ, բայց ե-
րանի՛ թէ Դէֆիս—հիմա որ ամբողջ
աշխարհը կարծէ ինձ համար—կեան-
քիս մէջ չը հանդիպէր»:

Ո՛հ, գալիք զէպերը այժմէն ի-
րենց միջին ստուերը սփռել սկսած
էին Սիւլէյմանիս վրայ...:

(Շարունակելի)

հէն. Այս մեծ դժբախտութիւն
մը պիտի ըլլայ Արեւելքի քրիստոն
եաներուն համար, բայց միեւնոյն
ժամանակ կըլլայ Ռուսիոյ վերջնա
կան կործանում Միթէ ռուս կառա
վարութիւնը այս կողմէ.
(Շարունակելի)

Տեղեկութիւններ

Ասկէ առաջ անարժեք մէջ
երեւցած գրութեամբս ամբողջ
տեղեկութիւններ տուած էի քա.
ղաքիս հայ վարժարաններուն
վրայ. Այս անգամ ալ յս մտք կը
զատեմ առաջին առթիւ ուղղել
այն փոքրիկ սխալը, որով յայտ
նած էի թէ պար. Ապագեան տեղ.
ւոյս համար ուսուցիչ կարգուած
է Էն. Մինչդեռ իմ գրութիւնս
հրատարակուելէն անմիջապէս
յետոյ այդ կարգադրութիւնը
սրբագրուեցաւ և այդ պարունին
տեղը դարձեալ նախորդ դասա
տու պր. Պետիկեանը վերակոչ.
ուեցաւ Վառնայէ. Այս վերջինը,
որ արդէն գոհ թողած էր մեզ
եկաւ միացաւ պր. Մ. Սիթեանի.
Կտոնց՝ երկուքն ալ դպրեմանքի
չըջանաւարտ և ճշմարիտը խո.
սելով՝ իրենց կոչման դիտակից
ու պաշտօնին ձեռնհաս ըլլալով,
վստահօրէն կը յուսանք թէ՛ նոր
տարեշրջանը շատ արդիւնաւոր
պիտի ըլլայ քաղաքիս երկսեռ
կրթարանին համար. Արդէն ա.
նոնք գործի սկսած կը վարեն
վարժարանը ամենայն կանոնա
ւորութեամբ. Ինչպէս պր. Պե.
տիկեանէ, նոյնպէս և մանաւանդ
պր. Սեթեանէ—որ աւելի փոր
ձառութեան բովէն անցած և ա.
ւելի ճարպիկ է ու կարող ուսուց
չութեան մէջ—իրաւամբ կ'սպա
սենք իրենցմէ որպէսզի գործու
նէութիւններն դպրոցի շրջապա
տերուն մէջ չը սահմանափակեն,
այլ ազգային և յեղափոխական
արտին մէջ ալ արդիւնաբեր ա.
կօսներ բանալու ջանքը չը խնա
յծն՝ մանաւանդ երբ գտնուած
միջավայրին կամ հայ շրջա
նակին նիւթապէս ու բարոյա
պէս շատ յարմար է մշակու
թեան, տեսնենք:

Ամիս մը կայ, որմէ հետ է դե.
րասան պր. Ա. Պէնլեան հոս կը
գտնուի իր խմբակով. Քանիցս է
ներկայացուցմներ կուտայ, առջի
բերան բաւական հետաքրքիր և
կամ զուայնութիւն առթող յո.
ջողութիւններ ունեցաւ, սակայն
չարիվարի և վրան բաց թրքոյ
կան ճոռճիւններու ամէն տար
ուայ կրկնումով գրեթէ պաղ ըն
դունելութիւն մը կը շեշտուի
հետզհետէ. Եթէ այդ խմբակին
մէջ ինքը՝ Պէնլեան չըլլայ՝ բը
նաւ համ հոտ չունենար և կամ
եւելի ճիշտը եթէ իրեն ալ քով

պր. Հայկ Արամը չը գտնուի բո
լորովին իր յաջողութիւնը կը
խտւարուի. այս վերջին պարո
նը՝ բաւական. բնգունակութիւն
կը ցուցնէ և շատ բնորոշ գոյնով
ու կերպով կը ներկայացունէ ի
րեն ինկած քիչ շատ լուրջ դե
րերը. գեռ երիտասարդ է և եթէ
քիչ մը աւելի աշխատի՝ օր մը
կրնայ և տառապանք մէջ բաժին
ունենալ և յարգուիլ.
Պր. Ա. Պէնլեան շատ լաւ կը
նէր եթէ երբեմն ալ տառապանք
տար—ինչ որ չէ կարող իր ձեռ
քին տակ եղող այդ անյարմար
անձերով—այս մտքին անտարբեր
գտնուելու չէ, այլ ապէս հասարա
կութեան համակրանքին իրեն
խմբէն հեռանալու՝ ամեն իրա
ւունք և հաւանակտնութիւն նե
րելի է:

Կըլտուի պր. Պապեանի խումբն
ալ հոս գալու դիտաւորութիւն
ունի եղեր, գէշ չէ՛ր ըլլար՝ քա
նի որ տառապանք շատ զգա
լի դարձած է. Այս պարագային
մէջ ալ, ամենայնպէս միջոցը
պիտի ըլլար այդ երկու խումբ
բերուն միացումը գէթ քաղաքիս
մէջ մնացած ժամանակամիջոցին.
այլապէս անտանելի պիտի ըլլան՝
եթէ զատ զատ ներկայացուցմներ
պիտի տան. հասարակութիւնը
բնաւ տրամադիր չըլլար երկու
տարբեր խումբեր մտիկ ընելու.
Ինչ որ է, կարճ միջոցի մէջ կը
տացանք արդէն Պէնլեանի մի
րինակ ու տաճկահաճոյ խաղե
րէն. մէկ խօսքով կամ տառապանք
ալ տալ և կամ յետ սյուռ Պէն.
լեան իր հոս գալուստը փոխանակ
տարուէ տարի ընելու՝ երեք տա
րին անգամ մը թող ընէ, այս
քանն ալ շատ լակ է. Այն ատեն
ժողովրդին բեռ ըլլալու չէ, այլ
զանի գոհացնելու բարի եռանդն
ու նախանձախնդրութիւնն ալ ու
նենալու է. Մեր այս դիտու
ղութիւնները բնաւ չարամտու
թիւն չը նկատուի, մտածելով
թէ այս տողերը գրողս թէ՛ գոր
ծով, թէ՛ ասպարէզով և թէ՛ ան
հատապէս առնչութիւն մը կամ
թողուն հաշիւ մը չունիմ պր.
Պէնլեանի խմբին հետ ընդհա
կառակն անոր սրբագրութիւն և
աւելի լաւ ընկերներով օժտուե
լու ի սրտանց փափաքող և յա
ջողութեան համար ալ յարմարե
լութիւն մաղթող մ'եմ:

ՔէՕՍԹԷՆՃԵՑԻ
14 սեպտ. 1905
ՔէՕսթէնճէ

Ա Ջ Դ
Պեքրէշի մանկապարտէզին համար
վիայեայ մանկապարտէզպանուհի մը
կը փնտռուի.
Իրմէլ հայ եկեղեցոյ Թաղ. Խոր.
հրդոյ Ատենակետ Տիար Յ. Իվան
ղօկու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՎԿԱՍ

Թիֆլիզի մէջ, ինչպէս արդէն
անցեալները յայտարարութիւնը
հրատարակեցինք, սկսած է լոյս
տեսնալ «Արշալոյս» թերթը եր
կու «Մշակի» մեծութեամբ և ե
րիտասարդ գրողներու ձեռքով.
Թերթին ստացուած թիւերը կը
ցուցնեն որ ան լուրջ յառաջա
գիմական թերթ մը պիտի ըլլայ.
Կովկասեան կարող գրիչները
կաշխատակցին այդ թերթին ի
թիւս ուսցնելով անհրաժեշտ և վեր
դանէս Փափազեան:

«Արշալոյս»-էն կիմանանք որ
Կովկասեան փոխարքայ Վօրժն.
ցով—Քաչկովի հրատարակուած լուր
անհիմն է:

Իպրոցական հոգաբարձու
թիւններու բնորոշութեանց միջո
ցին հարց եղած է որ կին հոգա
բարձուներ ալ բնորոշին:

Պարուի մէջ թէեւ կոտորա
ժը գողաբարձ է բայց մէկ—մէկ
սպանութիւններ տեղի կունե
նան. Խանութները սկսած են
բացուիլ:

«Արշալոյս»-ի Պարսկաստանի
Ռէշտ քաղաքէն կը գրեն որ Պա
քուէն վերադարձած պարսիկներ
հայերու դէմ կը գրգռեն տեղա
ցի ժողովուրդը. պարսիկ կա
ռավարութիւնը խիստ միջոցներ
ձեռք առած է բնդհարման ա
ռաջն տանելու համար:

Պարսից Եհէր սահմանագ
լուխ անցած պահուն պարսիկ
մաքսատան պաշտօնէից հրամա
յած է հայերուն հետ լաւ վար
ուիլ, անոնց մէկ մազին չը գիպ
չել, որովհետեւ ինքը չի ուզեր
որ երկրին մէջ կովկասի մէջ տե
ղի ունեցած վայրենութեանց նը
ման գործեր տեղի ունենան:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն կը հեռագ
րեն որ Ռիթէ պիտի մասնակցի
կոմս Սօլսկիյի նախագահութեան
տակ գտնուած յանձնախմբին ո
րուն նպատակն է պատասխանա
տուու նախարարութիւն հիմնելու
ժրագիրը մշակել:

Ռուս թերթ մը կը հայտարարէ
որ կառավարութիւնը կանաւտա
գաղթած Տօխուպուրները պիտի
հրաւիրէ կրկին Կովկաս վերա
բնակելու, խոստանալով հոյ և
գաւանանքի ազատութիւն:

Մաքսիմ Կուկիյ գիտու
թեանց ճեմարանի պատուաւոր
անդամ բնորոշ է, այս անգամ
կառավարութիւնը հակառակած
չէ այդ բնորոշութեան:

Պ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլտոյ աւտարական հիւան.
դանոցի մէջ ծառայող Հայաս
տանցի մը քով պայթուցիկ նիւ
թեր գտնուած են. հայր այդ
նիւթերը կողովով մը ուզեր է
զուրս տանել. բայց ողորմ. ձ
քով մը կապած իրով ձեռքէն ա.
սեր է կողովը ու վերջը հիւան.
դանոցի վարչութեան յայտներ,
վերջինս ալ թուրք կառավարու
թեան:

Սեպտեմբեր 19ին Պօլտէն
կը հեռագրեն որ Սուշկունը ի
րաւեով մը իր կառավարու
թեան հրամայած է եռանգուն
կերպով մերժել Մակեդոնիոյ Ե
լեւմտից քօնթրօլին առաջարկը:

Պօլտէն կը հայտարարեն որ
վերջերս ձերբակալուած են երեք
հայեր, ուսմը պահած ըլլալուն
պատճառով. Ատոնք են Առա, էլ.
Նշան, Մանուկ և Յովսէփ. Ատոնք
գործ են ունեցած Ամերիկահայա
տակ Վահանի մը հետ որ Ռիպսի
գործակիցը եղած է:

ՌՈՒՄԱՆԻԱ

Այս օրերս Եաշ հասեր է ըմ
բոստ Կինեազ Փօթեօփիւն զրա
հաօրի քահանան և կուզէ նա
ւաստիները համոզել հայրենիք
վերադառնալ:

ՍԵՐՊԻԱ

Թուրք կառավարութիւնը գո
հացում տուած է Սերպիոյ պա
հանջներուն որ եղաւ թուրք
չօրքերու Սերպիոյ սահմանը անց
նելուն պատճառով:

Կ Ր Է Տ Է

18 սեպտեմբերին Աթէնքէն
կը հեռագրեն հետեւեալը. Կա
ցութիւնը կրէտէի մէջ կը շարու
նակէ ծանր մնալ. նոր ընդհա
րուցմներ տեղի ունեցեր են ապս
տամբներուն և ռուս զօրքերու
միջեւ. ապստամբներու առաջ
նորդ Ենտէրատին գերի բռնուած
է. ռուս և իտալական զօրքեր
հասած են Կանեա. Պետութիւն
ները նոր կոչ մը յայտարարած
են, սակայն կրէտայիները կա
րեւորութիւն չեն տար այդ կո
չին:

Ա Ջ Դ

Սիլիստրէի Ազգային երկսեռ վար
ժարանիս համար հարկաւոր է երա
ժիշտ ուսուցիչ մը. որ պարտաւոր
ըլլայ դաստիարակ վարժարանին մէջ
10-2 ժամ, գլխաւորաբար ազգային
և եկեղեցական երգեր հսկել և ե
կեղեցոյ մէջ ալ դպրութիւն ընել.
Ամսաթուղակը գոհացուցիչ պիտի
ըլլայ.
Բանակցութեան համար դիմել ուղ
ղակի ժողովոյ ստեղծակցութիւն.
Ի գիմաց Հոգաբարձութեան
Ատենադպիր Ատենապետ
Գ. Աղամեան Գ. Կ. Տիրացուեան
16 Սեպ. 1905 (Կնիք)
Սիլիստրա